



«Սկզբում էր Խօսքը ... եւ Խօսքը Աստուած էր ... ».
 «Ամէն բան Նրա միջոցով ստեղծուեց ... ».
 «Նրանում էր կեանքը եւ կեանքը մարդկանց Լոյսն էր ... ».
 «Նա Իր ժողովրդի մօտ եկաւ ... Ովքեր ընդունեցին Իրեն,
 նրանց իշխանութիւն տուեց՝ դառնալու Աստծոյ որդիներ ... ».
 «Եւ Խօսքը մարմնացաւ եւ եկաւ մեր մէջ բնակուելու ...
 լի շնորհով ու ճշմարտութեամբ»:

«Նրա լիութիւնից մենք բոլորս ստացանք շնորհ շնորհի վրայ» (Յովհ 1, 1-18):

Սուրբ Ծնունդը աստուածային անսահմանափակ սիրոյ խորհուրդն է:

Պատմութեան ամենամեծ իրադարձութիւնն է, որը, ժամանակների լիութեանը կատարուած լինելով հանդերձ, շարունակուած է մեզնից իւրաքանչիւրի կեանքում:

Աստծոյ Որդին իջել է մեր մէջ եւ դարձել է մեր նման մարդ, մեր փրկութեան համար ապրելու, մահանալու, յարութիւն առնելու համար:

Եկել է որպէս մանուկ, եկել է որպէս պարտաւոր, եկել է որպէս բանասէր, եկել է որպէս սուսօյն, եկել է որպէս Փրկիչ, Իր ուսերին առնելու աշխարհի մեղքերը, որպէս զոհ՝ մեր փոխարէն. եկել է մարդկութեան կեանքի ու յարութեան համար. եկել է՝ մեզ Աստծոյ որդիներ դարձնելու համար:

Սուրբ Ծնունդը մի արեւ է, որ ծագում է եւ մայր չի մտնում երբեք:

Ճշմարիտ Լոյսն է, որ լուսաւորում է իւրաքանչիւր մարդու կեանքն ու ուղին:

Աստծոյ Որդին եկել է մեզնից իւրաքանչիւրի, հետեւաբար՝ նաեւ իմ համար:

Իմ Համար: Իր այս անսահմանափակ սէրը պէտք է որ փափկացնի, յուզի ու զրաւի կարծրացած սիրտս:

Իմ Համար: Միշտ իմ Համար: Ամէն բան իմ Համար:

«Աստծոյ Որդին, մէկ անգամ ընդ միշտ ծնուելով ըստ մարմնի, այժմ բոլոր կերպով փափաքում է Հոգեպէս ծնուել նրանց ներաշխարհում, ովքեր կամենում են Իրեն. եւ դառնում է մանուկ, որը աճում է նրանց առաքիլութիւնների աճին համաչափ. եւ յայտնուած է՝ ըստ Իրեն ընդունողի ունակութեան:

Ինչը նշանակում է, որ Սուրբ Ծնունդը մի խորհուրդ է միշտ նոր եւ երբեք չի հնանում ... » (Սուրբ Մաքսիմոս Խոստովանող):

Ապրիր մշտապէս Ծնունդի լոյսի մէջ:

Աստծոյ Որդին, Բեթղեհէմում ծնուած, միշտ քո կողքին է մնում, քեզ Իր նման դարձնելու համար:

ՈՒՐԱԽ ԱՄԱՆՈՐ ՁԵՁ, ԵՐՁԱՆԻԿ ՆՈՐ ՏԱՐԻ
 ԲԵՐԿՐԱՆՔՈՎ ԼԻ ՍՈՒՐԱ ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ